

Թիւն մը կը կազմէին, կեղըօնը ըլլալով Գրիստոսի Ս. Գերեզմանը: Կասկած չկայ թէ Հայք Սալահէտտինէն ստանալով Քրիստոսի Ս. Գերեզմանը, սեպհականատէր կ'ըլլային տեղւոյն կառուցուածքներուն. բայց կ'երեւի որ Հայերը քրիստոնէական եղբայրասիրութեամբ առլցուն՝ Ս. Յարութեան տաճարին ամբողջութեան չուղեցին տիրանալ, այլ միայն նախընտրեցին Գողգոթան իրենց պահել, թոյլ տալով միւսոյն ժամանակ միւս քրիստոնէից իրենց ուխտը եւ արարողութիւնները կատարելու: Հայեր որոշապէս սեպհականատէր դարձած են Գողգոթայի եկեղեցիին. և երեք հարիւր տարիներ յետոյ նոյն սրբավայրը անխրաւաբար կը յափշտակուի Վրացիներէն: Երկար կ'ըլլայ հոս մէջ բերել յիշատակարանները այն գրչագրողներուն որ Գողգոթայի հայ եկեղեցիին մէջ ընդօրինակութիւններ կատարած են. միայն հետաքրքրութեան համար ձեռագրաց յիշատակարաններէ քաղելով կը գնենք ցանկը անոնց որ այդ կերպ աշխատանք ունեցած են հոն.

1.— Վարդան վրդ. Բաբերդցի. 12 ստրի կը մնայ Երուսաղէմ և Գողգոթայի համար կ'ընդօրինակէ Ճաշու գիրք մը. 1365ին յիշեալը յետոյ կը դառնայ Կիլիկիա և Եպիսկոպոս կը ձեռնադրուի Կոստանդին կաթողիկոսէն:

2.— Յովնանեկս Կրօնաւոր՝ 1416ին Ս. Գողգոթայի եկեղեցիին մէջ Աւեսարան մը կ'ընդօրինակէ Քաջբերունեաց Ոսառարաստի վանահայր Կարապետ վրդ.ի համար, որ ուխտի եկած էր նոյն միջոցին:

3.— Մկրտիչ արեղայ՝ լուսարար Ս. Յարութեան և Գողգոթայի, 1427 ին ստացողը կ'ըլլայ Կարողիկեայց բոքոց մեկնութեան մէկ ձեռագրին:

4.— Ներսէս Երեզ՝ Երուսաղէմի Մեսրոպ և Աբրահամ պատգիարքներու օրով (1445-1461) Երուսաղէմի մէջ կ'ընդօրինակէ Գանձարան մը (անթուական) և իր յիշատակարանին մէջ կը յիշատակէ Գողգոթայի եկեղեցին:

Այս և ուրիշ յիշատակարաններէն, ինչպէս նաև հրովարտակներէն կը հասկցուի թէ Գողգոթայի եկեղեցին մինչև ԺԵ. դարու կիսուն, թերեւս քիչ մըն ալ աւելի, կը մնար Հայոց Միաբանութեան սեպհականութիւնը:

Վրացիք քրիստոնեայ ըլլալէ գրեթէ յիսուն տարի վերջ բազ-